

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/5**

**2 փետրվարի 2016 թ.**

Քննարկվեց «Վարզոս» ԲԲԸ բաժնետեր Ա.Նալչաջյանի 29.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 08.12.2015 թ-ի թիվ 3836 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 17.11.2015 թ-ի թիվ 17338 գրությամբ պահանջված փաստաթղթերի պատճենները տրամադրելու վերաբերյալ:

**«Վարզոս» ԲԲԸ բաժնետեր Ա.Նալչաջյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա.Նալչաջյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ 06.11.2013թ-ից հանդիսանում է «Վարզոս» ԲԲԸ-ի բաժնետեր:

Ի պատասխան իր 17.11.2015թ. թիվ 17338 դիմումի Շենգավիթի հարկային տեսչությունից ստացել է 08.12.2015թ. թիվ 3836տվ գրությունը, որով բացարձակապես անհիմն և իրավաբանորեն անհեթեթ կերպով մերժվել է իր դիմումի օրինական պահանջը:

Այդ մերժումով Շենգավիթի հարկային տեսչությունը խախտել է գանգատաբերի սեփականության (տիրապետման) իրավունքը՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 5, 6, 8, 28 հարվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 հոդվածի, Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 37 հոդվածի ե) կետի և այլ իրավական դրույթները:

Օգտվելով Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքով իրեն ընձեռնված իրավունքից՝ վերադասության կարգով գանգատարկելու ստորադաս կազմակերպության վարչական գործողությունը (անգործությունը), գանգատաբերը պահանջում է.

- սույն գանգատի հիմքով հարուցել վարչական վարույթ՝ իրեն մասնակից դարձնելով վարչական վարույթի լուսմներին,

- ոչ իրավաչափ ճանաչել Շենգավիթի հարկային տեսչության 08.12.2015թ. թիվ 3836տվ գրությունը,

- պարտավորեցնել Շենգավիթի հարկային տեսչությանը տրամադրել 17.11.2015 թ-ի թիվ 17338 գրությամբ պահանջված փաստաթղթերի պատճենները:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վարզոս» ԲԲԸ բաժնետեր Ա.Նալչաջյանը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետին հասցեագրված 17.11.2015 թ-ի գրությամբ խնդրել է տրամադրել «Վարզոս» ԲԲԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) վերաբերյալ հետևյալ փաստաթղթերի պատճենները.

1. Ընկերության պետական գրանցման վկայականը,

2. Ընկերության կանոնադրությունը, կանոնադրությունում կատարված լրացումները և փոփոխությունները, կանոնադրությունը նոր խմբագրությամբ (առկայության դեպքում),

3. Ընկերության հիմնադրման մասին որոշումը և պայմանագիրը,

4. Ընկերության տարեկան հաշվետվությունները (2013թ. և 2014թ.), Ընկերության 2015թ. եռամսյակային կամ ամսական հաշվետվությունները (առկայության դեպքում),

5. Ընկերության՝ 2013-2015թ.թ. հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (հաշվապահական հաշվեկշիռներ, շահույթի և վնասների հաշիվներ, աուդիտորական եզրակացություններ),

6. Ընկերության՝ հարկային տեսչությանը ներկայացված ֆինանսանսական հաշվետվություններ,

7. Ընկերության՝ հարկային տեսչությունում առկա այլ փաստաթղթեր, որոնք չեն նշված վերոհիշյալ 1-6 կետերում:

Գանգատաբերի 17.11.2015 թ-ի գրությանը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 08.12.2015 թ-ի թիվ 3836 գրությամբ պատասխանվել է, որ պահանջված փաստաթղթերը չեն կարող տրամադրվել, քանի որ այդ տեղեկատվությունը «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն համարվում է հարկային գաղտնիք և ենթակա չէ տրամադրման: Պատասխան գրությունում նշվել է նաև, որ հարկ վճարողի վերաբերյալ հարկային գաղտնիք պարունակող կամ այդպիսիք հանդիսացող տեղեկությունները կարող են հրապարակվել միայն հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ «Վարզու» ԲԲԸ բաժնետեր Ա.Նալչաջյանի գանգատը՝ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 08.12.2015 թ-ի թիվ 3836 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու և 17.11.2015 թ-ի թիվ 17338 գրությամբ պահանջված փաստաթղթերի պատճենները տրամադրելու վերաբերյալ, ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Հարկային գաղտնիք՝ հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

- հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների»:

Իր հերթին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի համաձայն. «Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը սույն օրենքի և կանոնադրության համաձայն իրավունք ունի՝



...

ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.»:

Տվյալ դեպքում Գնագատաբերի կողմից պահանջված՝ Ընկերության տարեկան հաշվետվությունները (2013թ. և 2014թ.), Ընկերության 2015թ. եռամսյակային կամ ամսական հաշվետվությունները, հանդիսանում են հարկային գաղտնիք, հետևապես չեն կարող տրամադրվել:

Ընկերության ֆինանսանսական հաշվետվությունները տրամադրելու վերաբերյալ Գնագատաբերի պահանջի մասին հարկ է նշել, որ նման տեղեկատվություն հարկային մարմնում առկա չէ:

Ինչ վերաբերվում է Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, դրանում կատարված լրացումների և փոփոխությունների, Ընկերության հիմնադրման մասին որոշման և պայմանագրի պատճենների տրամադրմանը, ապա նման պահանջով գանգատաբերին անհրաժեշտ է դիմել համապատասխան լիազոր մարմնին՝ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Վարզոս» ԲԲԸ բաժնետեր Ա.Նալչաջյանի 29.12.2015 թ-ի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

